համար էլ թոյլ չէր տուել Սոկրատ բէկին իր չրջանով անցնելու:

Դոլանլարը աւերուելուց յետոյ, Անդրանիկը Գորիսում կատաղում է եւ հայհոյում անգլիացիներին, որ իրեն խաբեցին, կռիւները դադարեցնել տուին. բայց Ազրբէյջանը աւերածութեան է ենթարկում հայկական գիւղերը:

Անգլիական միսիան, քաղաքագլուխ Գ. Մելիք-Շահնազարեանի միջոցով, չրջաններից հրամանատարներին է պահանջում եւ միաժամանակ էլ քաղաքից մի ներկայացուցիչ ընտրելու իրաւունքն է տալիս:

Զորս չրջանների (Դիզակ, Վարանդա, Խաչէն, Ջիւանչիր) հրամանատարները՝

Դիզակ՝ Ա-ն, Վարանդա՝ Սոկրատ բէկ Մելիք-Շահնազարեան, Խաչէն՝ Ալէքսան Դալի, Ջիւանչիր՝ Բագրատ Ղազանչեան զալիս են Շուշի:

Սոկրատ բէկը նախ քան իր քաղաք մտնելը, ձեւականութեան համար, Ա.- Պ-ի առաջնորդութեամբ գաղտնի Շուշի է մտցնում մի վաչտ, որ եւ տեղաւորւում է տաճկական ապրանքների ապրած բնակարաններում: Իսկ ինքը մի երեսուն ձիաւորներով միւս օրն է մրտնում Շուշի: Շուշուայ տականքներից Ռուբէն Շահնազարեանը ու վաճառականութեան ներկայացուցիչները, Եարմի*) մօտ դուռնայով դիմաւորում են Սոկրատ բէկին եւ բերում են Գերասիմ աղայի տունը:

Թէ՛ Սոկրատ բէկը եւ թէ՛ իր գաղտնի քաղաք մտցրած վաչտը, քաղաքում ոչինչ չեն անում:

Մի քանի չաբթից յետոյ, այդ վաչտը ցըրւում է: Սոկրատ բէկը մնում է քաղաքում ու անվերջ Շուշուայ կլուբում գիչերները «Ճըխրա» է խաղում. իսկ ցերեկներն էլ, անգլիական միսիայի հետ անչատ բանակցութիւններ է վարում:

Քաղաքի ներկայացուցիչը, Շուշուայ լինքնավարութեան կողմից է ընտրւում:

Հայրապետ Մուսայէլեանն ու Գերասիմ Մելիք-Շահնազարեանը հաւասար ձայներ են ստանում: Որոչւում է երկուսին էլ ճանաչել ներկայացուցիչներ:

Հայրապետ Մուսայէլեանը, առանց կուսակցութեան պիտութեան հրաժարւում է, բայց յետոյ Կ. Կոմիսէի առաջարկով մանակցում է, անգլիական միսիայի եւ հրամանատարների խորհրդակցութիւններին:

Չրջանի հրամանատարներն ու քաղաքի երկու ներկայացուցիչները կազմում են ժամանակաւոր խորհուրդ:

Անգլիական միսիան, առաջին հերթին յայտարարում է Խորհրդին, որ ինքը քաղաքական խնդիրներով պիտի չզբաղուի, այլ իրա նպատակը պիտի լինի զաղթականութեան օժանդակելն ու Ղարաբաղի տնտեսական վիճակով հետաքրքրուիլը. ուստի առաջարկում է չրջանների հրամանատարներին, իրենց չրջաններում դինուած դրութեան վերջ տալ եւ հաչտեան թաթարների հետ հաչտ ապրիլ:

Ճիշդ է, այդ միսիան իր Շուշի եկած օրուանից ամենուրեք յայտարարում էր, որ իր գործը գաղթականութեան վիճակով զբաղուելն է, բայց հայկական չրջանների հրամանատարներին առանձին-առանձին հրաւիրում էր իր մօտ եւ չատ խորամանկ կերպով, մանրամասն տեղեկութիւններ էր հաւաքում գաւառի զինական ուժերի, վարչական եղանակի եւ տնտեսական դրութեան մասին:

Հրամանատարներն էլ հաւատալով անգլիական միսիայի անկեղծութեանը եւ յոյս ունենալով որ նա իրենց կ'օգնի, միամտաբար պատմում են իրենց չրջանի զործունէութեան ու կարիքների մասին:

Քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարեանը՝ օգտուելով իր դիրքից, յաճախ Սոկրատ բէկի հետ լինում է անգլիական միսիայի մօտ եւ անչատ քաղաքականութիւն է վարում Ղարաբաղի խնդրի չուրջը. իսկ դըրսում Ռուբէն Շահնազարեանն էլ իր հերթին, ի նպաստ Ազրբէյջանի կառավարութեան է պրոպագանդ մղում:

Հ. Յ. Դ. Ապառաժի Կ. Կոմիսէն արթուն հսկում էր Ղարաբաղի անցուդարձերուն եւ որոչ տեղերում պաչտօնապէս հանդէս էր գալիս:

Տեսնելով որ Գերասիմ Մելիք-Շահնազար-

*) Եարման, Շուշու հարաւ-արեւմտեան մասումն է գտնւում եւ քաղաքից այնքան էլ հեռու չէ. 10 րոպէի ճանապարհ է: